

ԿԱՐԾԻՔ

ՀԵՆՐԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 387-630-ԱԿԱՆ ԹԹ.» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Է.00.01
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջնադարյան Հայաստանի պատմությանը և պատմական աշխարհագրությանը նվիրված գիտական հետազոտությունները ներկայումս խիստ պահանջված են: Խնդիրն այն է, որ մասնագետների սակավությանը զուգահեռ պակասում են նաև գիտական և ընթերցասեր հանրության համար հետաքրքրություն ներկայացնող՝ հայոց պատմության միջնադարին վերաբերող թեմաների հետազոտությունները: Խնդիրն առավել սրված է այն իրողության հաշվառմամբ, որ մեր հարևանները վաղուց ի վեր իրականացնում են բարի բուն իմաստով պատմահենություն՝ երբեմն-երբեմն թիրախավորելով հայոց պատմության հենց միջնադարյան շրջանը:

IV-VII դդ. Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության հիմնահարցերը նախկինում եղել են բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն մինչև օրս ել բաց կամ նորովի ուսումնասիրության կարոտ են մնում բազմաթիվ դրվագներ, որոնցից են, մասնավորապես, երկրի վարչական կառուցվածքի, իրավական կարգավիճակի և նախարարական համակարգի հիմնահարցերը:

Ասվածի համատերաստում արժևորվում է Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» թեմայով ատենախոսությունը, որտեղ քննության են առնված նշված, ինչպես նաև այլ՝ ուսումնասիրության կարոտ հիմնահարցեր:

Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» խորագրով ատենախոսության նպատակը IV դ. վերջից մինչև VII դ ռաջին կեսը Հայաստանում տիրող վարչաքաղաքական համակարգի քննությունն է:

Մասնավորաբար, ատենախոսի ուշադրության կենտրոնում են եղել Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից հետո տիրող իրադրությունը և Արևելահայկական թագավորության վարչական կարգավիճակը, թագավորության կորստից հետո Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածների վարչական կարգավիճակը, նախարարական համակարգի էությունն ու հողատիրության ձևերը և Մարզպանական Հայաստանի սահմանները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու զիսից, որոնցից առաջինը կազմված է երկու, իսկ երկրորդը՝ երեք ենթազլիսից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 148 էջ է: Ատենախոսությանը կից հեղինակը ներկայացրել է խիստ կարևոր հավելված՝ «Մարզպանական Հայաստանը 428-451 թթ.» վերնագրով քարտեզ, որտեղ փորձ է կատարվել ճշգրտելու Մարզպանական Հայաստանի նախարարական տիրույթների սահմանները:

Ատենախոսության առաջին զլուխը կրում է «Հայաստանի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը (387-630-ական թթ.)» վերնագիրը: Այս զլուխը ատենախոսի թիրախում են եղել հատկապես Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումից հետո երկրի արևելյան և արևմտյան հատվածների վարչական կառուցվածքի և իրավական կարգավիճակի հարցերի քննությունը:

Երկրորդ զլուխը [«Հայաստանի նախարարական համակարգը (387-630-ական թթ.)»] ատենախոսը քննության է առել խնդրո առարկա ժամանակաշրջանում նախարարական համակարգի էությունը, նախարարների հողատիրական իրավունքներն ու տիրույթների սահմանները, ինչպես նաև անդրադարձ կատարել Մարզպանական Հայաստանի կառավարման համակարգին:

Ատենախոսությունը աչքի է ընկնում կուր կառուցվածքով և հեղինակի հետևողական աշխատանքով, իսկ եզրակացությունները բխում են հեղինակային վերլուծությունից, հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության աղբյուրային և հետազոտական հենքը բավարար է լիարժեք և արդյունավետ զիտական ուսումնասիրություն իրականացնելու համար: Ատենախոսն ըստ անհրաժեշտության անդրադարձել է տարբեր հետազոտողների տեսակետներին,

քննարկել դրանք՝ այլոց կարծիքներն ու դրույթները օժտելով բոլոր անհրաժեշտ հղումներով:

Ատենախոսության մեջ Հ. Խաչատրյանի կատարած քննությունն ու արտահայտած կարծիքները հնարավորինս հիմնավոր են, օրինակտիվ: Ատենախոսը հանդես է բերել աղբյուրային և վերլուծական գրականության հետ աշխատելու հմտություններ, հետազոտական աշխատանք կատարելու ընդունակություններ, գիտական խնդիրներ սահմանելու և դրանք հետևողականորեն լուծելու կարողություններ, որի արդյունքում մասնագիտական խորհրդի դատին է հանձնվում արդյունավետ, կայացած ու կարևոր գիտական աշխատություն:

Հ. Խաչատրյանի ատենախոսության վերաբերյալ իմ լիովին դրական կարծիքին զուգահեռ ստորև ներկայացնում եմ նաև մի քանի դիտողություններ:

1. Հեղինակը ատենախոսության ժամանակագրական շրջանակ է սահմանել 387 թվականից, երբ տեղի ունեցավ Մեծ Հայքի բաժանումը, մինչև 630-ական թթ., երբ, ըստ նրա՝ Հայկական մարզպանությունում թուլացավ և վերացավ Սասանյան Իրանի տիրապետությունը (Էջ 6): Կարելի էր «630-ական թթ.» ընդհանրական ձևակերպման փոխարեն արձանագրել 640 թվականը, երբ, արաք զորավար Իյադ իրն Ղանմի զորքի՝ Հայաստան ներխուժմամբ վերջնականապես ի շիր դարձավ արդեն մի քանի տարի անգո պարսկական տիրապետությունը Հայաստանում: Ի դեպ, հայտնի է, որ ժամանակին է. Դանիելյանը կասկածի էր ենթարկել Մեծ Հայքի բաժանման տարեթիվը՝ հնարավոր համարելով 385 թվականը (Դանիելյան, Է., Հայաստանի բաժանման տարեթիվը՝ 387 թե՝ 385, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, N 1, Էջ 203-214): Հեղինակն այդ տեսակետին չի անդրադարձել, թեև այն կարող էր նպաստել ատենախոսության ժամանակային սահմանների հստակեցմանը:
2. Վիճելի է Էջ 22-ում ատենախոսի հայտնած այն տեսակետը, թե Սասանյան Իրանին ենթակա դարձած «... երկրում (իմա՝ Արևելահայկական թագավորություն-Ա.Ե.) թագավորի, ինչպես նաև համապատասխան կառավարման համակարգի առկայության պայմաններում մարզպանը դեռևս չէր

կարող օժտված լինել բարձրագույն իշխանությամբ։ Խնդիրն այն է, որ Սասանյաններին և նրանք դարձած թագավորությունում նույն այդ Սասանյանների նշանակած պաշտոնյան՝ մարզպանը, որպես գերակա պետության ներկայացուցիչ ենթակա երկրում, ակնհայտորեն պետք է ունենար բարձրագույն իշխանություն՝ հսկելով արևելահայոց արքունիքին։ Ատենախոսը, բացի նշված՝ զուտ տրամարանական պնդումը, իր կարծիքի որևէ այլ հիմնավորում չի ներկայացնում։

3. Էջ 45-ում ատենախոսը, բխեցնելով Թովմա Արծրունու այն տեղեկությունից, թե Վարդան Մամիկոնյանը ամրացել է Մոկրի Զերմածոր գավառի Զողայլ (Զոայլ) ամրոցում, կարծիք է հայտնում, թե Զերմածոր գավառը պատկանում էր Մամիկոնյաններին։ Եթե նույնիսկ գավառը պատկանել է Մամիկոնյաններին, Թովմա Արծրունու գրքից ատենախոսի կատարած մեջբերումը բավարար չէ ներկայացված կարծիքը հիմնավորելու համար, քանի որ այնտեղ միայն նշված է, որ Վարդան Մամիկոնյանը ժամանակավորապես է բնակվել Զերմածորում՝ խուսափելով վտանգից։
4. Ի տարբերություն առաջին զլիսի առաջին ենթագլխի («Մեծ Հայրի արևելյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը»), որն աչքի է ընկնում մանրակրկիտիկինակային վերլուծությամբ, երկրորդ ենթագլխիր («Մեծ Հայրի արևմտյան հատվածի վարչական կառուցվածքն ու իրավական կարգավիճակը») ունի ավելի շատ նկարագրական-լուսաբանական բնույթ, թեև դրանով չի կորցնում իր արժեքը, քանի որ այնտեղ բարեխղճորեն և համադրաբար ներկայացված են Մեծ Հայրի արևմտյան մասի՝ խնդրո առարկա շրջանի վարչադարձական կացության մասին աղբյուրների տեղեկությունները և հետազոտողների կարծիքները, վեր են հանված հստակեցման կարիք ունեցող մի շարք իրողություններ։
5. Ցանկալի կլիներ, որ երկրորդ զլիսի երկրորդ ենթագլխի («Նախարարների հողատիրական իրավունքներն ու տիրույթները») նախարարությունների տիրույթներին նվիրված հատվածում ատենախոսը երբեմն հանդես գար ներկայացված տեսակետների հավելյալ հիմնավորումներով։ Օրինակ՝ Բագրևանդ գավառի պարագայում։ Ատենախոսը 106 էջում գրում է, որ գավառի մի մասը

նախապես եղել է կաթողիկոսական տիրույթ, իսկ Սահակ Պարթևի մահից հետո անցել է Մամիկոնյաններին: Այնուհետև հավելում է, թե «Դժվար չէ կռահել, որ Բագրևանդի մնացյալ արքունապատկան հատվածը ժամանակի ընթացքում ևս պետք է միացվեր Մամիկոնյանների տիրույթներին»: Եվ վերջ: Պարզ չէ, թե ինչո՞ւ դժվար չէ այդ կռահելը: Ցանկալի կլիներ, որ ատենախոսն ավելի մանրամասն վերլուծեր Բագրևանդ գավառի ամբողջական կամ մասնակի պատկանելիության հարցը:

6. Վերջում ներկայացնենք դիտողություններ ատենախոսության մեջ հանդիպող մի քանի մանր ինդիրների շուրջ: Մասնավորապես, Էջ 16-ում ատենախոսը հեղել է «Հայաստանի ազգային ատլասի» Բ հատորը՝ առանց նշելու քարտեզի հեղինակին ու անվանումը (նույնը՝ էջ 19): Էջ 17-ում գրված է. «Մեծ Հայքի նկարագրության մեջ բդեշխություններից միայն Գուգարացն է...», քայլ ճիշտ կլիներ՝ «Մեծ Հայքի նկարագրության մեջ բդեշխություններից միայն Գուգարքինն է...» ձևը, քանի որ «Գուգարաց»-ը պաշտոնական անվանում չէր և ըստ այդմ՝ անփոփոխելի չէ, այն սույկ «Գուգարք»-ի սեռական հոլովն է: Մեկ այլ դեպքում(էջ 25) գրում է «Տաշիր», իսկ սեռական հոլովում՝ «Տաշրաց»: Մինչդեռ «Տաշրաց» ձևը բխում է հոգնակի «Տաշիր» ձևից, իսկ «Տաշիրի» պարագայում սեռական հոլովը կլինի «Տաշրայ»: Էջ 19-ում ատենախոսը գրում է, թե «...Արևելահայկական թագավորությունը ... ընդգրկում էր... Աղձնիքի՝ Սանասունք գավառը, բացառությամբ Երիւեթը, Գգեղիս, Սալն ձոր, Ազնվաց ձոր, Տատիկ և Կեթիկ գավառների Սանասունքից առանձին գավառներ էին, ինչը լավագույնս հայտնիէ ատենախոսին: Էջ 52-ում ատենախոսը հղում է արաք հեղինակ Բալագուրիի Երկի՝ Բարվի 1927 թ. հրատարակությանը, մինչդեռ առկա է արաք հեղինակի աշխատության այդ հատվածի հայերեն թարգմանությունը (տե՛ս Տեր-Ղևոնյան Ա., Արաք մատենագիրներ (Թ-Ժ դարեր), ներածությունը և բնագրից թարգմանությունը Ա. Տեր-Ղևոնյանի, Ե., 2005, էջ 267), և ցանկալի կլիներ, որ հղումը կատարված լիներ հենց այդ թարգմանությանը:

Նշված դիտողությունները, սակայն, էականորեն չեն անդրադառնում ատենախոսության արժանիքների վրա և ատենախոսին օգտակար կլինեն հետազայում:

Հ. Խաչատրյանը կատարել է կարևոր և ուշագրավ աշխատանք, որտեղ ակնառու են հեղինակային խոսքը և վերլուծական միտքը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, հեղինակի հրատարակած գիտական հոդվածներն ել արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները՝ ներկայացնում եմ հետևյալը.

1. ատենախոսության թեման ունի կարևոր գիտական նշանակություն և արդիական է,
2. ատենախոսության մեջ առկա դրույթները և եզրահանգումները ձիշտ են և հիմնավորված, իսկ փոխառված մտքերն ու դիտարկումները՝ հղված,
3. ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու հեղինակային եզրահանգումները նոր և հիմնավոր են,
4. ատենախոսությունը համապատասխանում է Կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, այն է՝ հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է և գնահատելի է իրքև պատմագիտության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում:

Այսպիսով՝ Հենրիկ Ալբերտի Խաչատրյանի «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» վերտառությամբ է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հաջողված գիտական հետազոտություն է և համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ասվածի հիմքով համարում եմ, որ Հենրիկ Ալբերտի Խաչատրյանն արժանի է իր հայցած՝ է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան

Ա. Ա. Եղիազարյանի

ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար՝

Լ. Ա. Հովսեփյան

10.05.2021 թ.

